

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2026թ. Ապրիլի 6-ից 10-ը ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից կազմակերպված «Թվային վերլուծության գործնական համայնք» թեմայով (Digital Analysis Community of Practice) թեմայով դասընթացին մասնակցելու նպատակով Ալմաթի (Ղազախստան) գործուղման արդյունքների մասին:

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Արևիկ Շահվերդյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության ոլորտային թիվ 1 բաժնի հարկային տեսուչ (տվյալների վերլուծաբան),

2) Նոնա Ադիկյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության գործիքակազմերի մշակման, թվայնացման և մոնիտորինգի բաժնի գլխավոր հարկային տեսուչ,

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի, 2026թ. ապրիլի 4-ից 11-ը:

3. Հրավիրող կողմը՝

ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոն (CCAMTAC):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Թվային վերլուծության գործնական համայնք» թեմայով հնգօրյա դասընթացին: Դասընթացը միտված էր ստեղծել համայնք, որտեղ կներկայացվեն և կքննարկվեն տարածաշրջանի հարկային վարչարարություններում վերլուծությունների իրականացման թվային գործիքները, առկա մարտահրավերները, խնդիրները և դրանք լուծելու համար ուղիներ:

Դասընթացին մասնակցող տարածաշրջանային 7 երկրների հետ իրականացվել են փոխադարձ քննարկումներ: Ուստի հանդիպումն աչքի էր ընկնում բովանդակալից ակտիվ քննարկումներով, խնդիրների առաջադրումներով և փոխադարձ շփումներով:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի շրջանակներում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

1. Թվային վերլուծության և տվյալների հարթակների ներկայիս վիճակը հարկային վարչարարություններում,
2. Թվային տվյալների վերլուծության գործիքներ և տեխնոլոգիաներ,
3. Տվյալների կառավարում և գաղտնիություն,
4. Մեթոդաբանություններ և լավագույն փորձ,
5. Համագործակցություն և գիտելիքների փոխանակում,
6. Գործնական համայնքների օրինակներ,
7. Միջազգային փորձ,
8. Կարողությունների զարգացում և հմտությունների կատարելագործում,
9. Մարտահրավերներ և լուծումներ,
10. Ապագայի ուղղություններ և նորարարություն,
11. Գիտելիքից դեպի գործնական կիրառում:

Մասնակցել ենք բոլոր պանելային քննարկումներին, որոնցից մի քանիսում ներկայացրել ենք մեր պրակտիկայում բացահայտված հաջողված գործերից: ՀՀ Պետական կոմիտեի կողմից կիրառվող մեթոդները և մեր պրակտիկայում կիրառվող գործիքակազմը հետաքրքրություն առաջացրեցին մասնակիցների շրջանակներում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ելույթներ ունեցան նաև Ուզբեկստանի, Մոնղոլիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի ներկայացուցիչները:

Ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց երկրների հարկային վարչարարությունների թվայնացման մակարդակը, առկա խնդիրները և դրանց լուծման համար ուղիներ: Ընդգծվեց IT մասնագետների, տվյալների վերլուծաբանների ընդգրկման անհրաժեշտությունը և

կարևորությունը վերլուծական վարչություններում՝ ավելի ճշգրիտ և արդյունավետ վերլուծությունների համար:

Հետաքրքրական էր Տաջիկստանի կողմից ներկայացված ուղղությունները.

1. թվայնացման լուծումները,
2. համագործակցությունը տաբեր երկրների հետ թվայնացման գործիքների ինտեգրման ուղղություններով,
3. տարբեր գերատեսչություններին թվայնացման ծառայությունների մատուցումն, որով ավելի արդյունավետ է դառնում տվյալների փոխանակումը,
4. «Էլեկտրոնային պահեստների» կիրառումն «առք ու վաճառք» իրականացնող հարկման ընդհանուր համակարգում գործող հարկ վճարողների մոտ,
5. «cloud» համակարգերի կիրառությունը իրենց հարկային վարչարարությունում:

Ելույթի խոսքով հանդես եկավ նաև Հայաստանը, ներկայացվեց համակարգի թվայնացման ներկայիս մակարդակը, կիսվեց հարկային իրավախախտումների բացահայտմանն ուղղված իր վերլուծական ուղղություններով, գործիքներով, կարողություններով: Ելույթի դրական արդյունքների մասին փաստում էր մյուս երկրների մոտ առաջացող հետաքրքրությունն ու հարցերը՝ մեր երկրում կիրառվող մեթոդների վերաբերյալ: Երկրների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց նաև այն փաստը, որ ՀՀ ՊԵԿ հայկային տեղեկատվության և վերլուծության վարչությունում արդեն իսկ ընդգրկված է տվյալների վերլուծաբան:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տվյալ հանդիպման շրջանակը չէր նախատեսում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցիչներին տեղեկատվություն ստանալ առաջատար հարկային մարմինների կողմից թվային դարաշրջանում հարկային կարգապահության ապահովման ուղղությամբ կիրառվող փորձի,

միջազգային կազմակերպությունների կողմից այդ հիմնահարցի մասով մշակված և կիրառվող գործիքակազմերի վերաբերյալ:

Առաջիկայում նախատեսվում են մի շարք դասընթացներ և աշխատաժողովներ: Վերոնշյալ դասընթացներին հնարավորություն կա մասնակցելու առցանց և ֆիզիկապես մասնակցելու ձևաչափերով:


Այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՀՀ ՊԵԿ-ում տվյալների թվայնացման մակարդակի և վերլուծական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Արևիկ Շահվերդյան



Նոնա Ադիկյան



15.04.2026թ.